

նակին պիտի վրայ հասնի այն դադար, նաժաժուկ հնարքն ուղնչացընելու և ազգային իշխանութե սկզբունքը պաշտպանելու: Գաղղիա միայն Գաղղիոյ բախտը պիտի սահմանէ: Հարկ եղաւ փութալ. գտնուած վիճակներնուս մէջ մեծագոյն վտանգ էր յապաղելն: Ութ օրուան մէջ Գաղղիա իր նուիրակները պիտի ընտրէ: Թող ինքը նախամեծար համարի ամենէն անձնանուէրները, ամենէն անշահախնդիրները և ամենէն արդարակորովները:

Մեզի համար մեծ հոգ է վերակենցաղիլ և հայրենեաց արիւնազանգ վերքերը դարմանել: Մենք համոզուած ենք թէ այս արիւնաշաղախ և աւերած երկիրը՝ հունձ և մարդիկ պիտի վերածընանի, և թէ յետ այնչափ նահատակութեանց՝ բարեբաստութիւնը նորէն մեզի պիտի դայ. միայն թէ զիտնանք առանց տընտընալու օգուտ քաղել ունեցած քիչ օրերնէս՝ զմեզ կարգաւորելու և իրարու հետ խորհրդակցելու:

Ժողովոյն բացման օրը, կառավարութիւնը անոր ձեռքը պիտի աւանդէ իշխանութիւնը: Նոյն օրը Գաղղիա ինքն իր վրայ աչքերը դարձընելով՝ խորագոյնս ինքզինքը թշուառ պիտի գտնէ. բայց թէ որ նոյնպէս ինքզինքը գտնէ թշուառութեամբը նորոգած, իր արութիւնը և իշխանաւորութիւնը լիովին ձեռք բերած, պիտի զգայ վերածնանիլ իր հաւատքն ապագային մեծութեան վրայ:

## ԺԻՒՂ ՍԻՄՈՆԻ ԵՒ ԿԱՄՊԵՂԴԱՅԻ

### ՏԵՍԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

Ժիւլ-Սիմոն Բարիզի անկումէն ետե իւր պաշտօնակցաց կողմանէ Բարիզէն երթալով Պորտոյ, 2 փետրուարի 1871, երբ տեսաւ զկամպէզդա և միւս ընկերակիցները՝ հեծեծել սկսաւ, և մէջերնին յուսաբեկ և ցաւագին խօսակցութիւն մը եղաւ:

Ժիւլ-Սիմոն խոր խոցուած՝ Բարիզի անկմանը վրայ՝ երբ առաջին անգամ տեսաւ իւր պաշտօնակիցները՝ սկսաւ լալ հեծեծանօք. թերեւ Բարիզի օգնականութեան համար գաւառաց մէջ եղած պատրաստութեանց անբաւականութիւնը երեսնին կ'ուզէր զարնել, սակայն նախ ինքը Պորտոյի կառավարութեան մեղադրանքը լսելու պարտաւորեցաւ:

Ժիւլ-Սիմոն անոնց նկարագրեց Բարիզի վիճակը, որուն համառօտութիւնն այս է. — « Պաշարման սկիզբէն Բարիզի մէջ գտնուած բանակը կը կազմուէր Սէտանի անկումէն վարատած միացորդներէն և շարժուն պահանորդէն (Gardes mobiles), որ այն ինչ խմբուած էր: Այս զօրքերը, որոնց հազիւ հազդէնք հոգացուեր էր, բաւական զօրութիւն չունէին թշնամոյն պատնիշաշինութիւնքն արգիլելու: » Ըսածս Շաղիհոնի պատերազմն ալ ստուգեց. վասն զի ամիս մը կը թութենէ և խրախոյսներէ ետքը՝ երբ յարձակման առաջին փորձի մը մէջ մտան, գերմանական թնդանօթից տակ ցիր ու ցան եղան: Որով ստիպուեցան առ ժամս Բարիզը միայն պաշտպանելով զօճ ըլլալ, և մասնական ու շարունակ յարձակումներով զէնքերնին կը թիւ, քնասողական պատերազմի մը պատրաստուելով, զոր և փորձեցին երկուք և կէս ամիս ետքը, Տիւզրոյ զօրապետին հրամանատարութեամբը, բայց 'ի զուր:

Այս կերպով չորս ամիս անցաւ, փոփոխակի երկու բանակներն իրենց դիրքը փոփոխելով: Երբ թշնամին կը յարձըկէր, բերդերէն և պաշարուած բանակէն անպարտելի դիմադրութիւն մը կը գտնէր. երբ մեր բանակը կը յարձըկէր, պաշարող և անառիկ դրրից հետ կը կռուէր: Մեր բանակը սլատերազմական դաշտէ ալ զուրկ էր, որովհետեւ թշնամոյն ամրոցները և հրետանիքը չէին թողուր որ ճակատ կազմէ և շարժէ իր բազմութիւնը: Հարիւր, երկու հարիւր հազար անձինք թնդանօթից շրջանակէ մը պաշարուած



էին, բերդերէն արձըկուած ուռմբերուն պատճառաւ, չկրնալով դէպ 'ի Բրուսիացուոց զիրքն յառաջել: Իսկ միւս կողմանէ ուտելաց պարէնը ըստ պառելու վրայ էր. Բարիդի վերջին վայրկեանները կը մօտենային: Ամեն շաբաթ, մանաւանդ թէ ամեն օր մեռելոց թիւը կ'առաւելուր. և երբ երկու միլիոն քաղաքացիք սովէ ջարդուելու վտանգի մէջ էին, Դռոշիւ ընտրելագոյն զօրքով յունուարի 19ին յարձակումը փորձեց, բայց Տիւզդոյին նման անյաջող ելք մը ունեցաւ:

Այն օրուրէն ետքը եղած ամեն պատերազմական խորհրդակցութիւնները մի և նոյն արդասիւքը ունեցան: Սպառնալով պատրաստ կը ցուցնէր ինքը զինքը արշաւելու և մեռնելու, բայց առանց յուսոյ թշնամոյն բանակին մէջէն ճամբայ բանալու: Շանգի զօրապետին խորտակման լուրը, Բարիզոցոց յուսահատութիւնն իր վերջին ծայրը հասուց, քաղցն ալ կնքեց զայն: Սովեալ ժողովրդեան երբ տալու ուտելիք ալ չըմնաց, և գաւառներէն օգնականութեան յոյսն ալ պարապի ելաւ, Բարիդի կառավարութիւնը ալ անկարող ճանչնալով ինքը զինքը գերմանական բանակին դէմ դնելու, վերջապէս սըրտաբեկ զիջաւ թշնամոյն հետ հաշտութիւն խօսելու:

Կամպէզդա՝ ամենեւին առարկութիւն մը չըրաւ Ժիւլ-Սիմոնին այս բացատրութեանցը դէմ, բայց առանց իրեն իմացընելու կնքուած զինադադարման պայմանաց, և ամենէն աւելի յայտարարութե՛ն խօսքերուն նկատմամբ՝ միշտ անողորմելի մնաց:

## Բ Ա Ր Ի Զ

ԻՐ ԱՆԿՈՒԾԷՆ ԵՏՔԸ, 7 ՓԵՏՐՈՒԱՐ, 1871

Բարիդ քաղքին անկումէն ետքը ներս մտնող տկանատես անձ մը այսպէս կը նկարագրէր անոր վիճակը:

« Բարիդ յետին աստիճանի լքած

և սարսափած է, սակայն մեծողի և բարեկարգ է, և կը ջանայ ըստ կտրի պարտըկել իւր վհատութիւնը: Խուռն բազմութիւն մը կը տեսնուէր փողոցաց մէջ, գրեթէ ամենն ալ զինուորական նշանադրեալ հագած, որոնց մէջ քիչը քաղաքացի կը տեսնուէին: Ըստ մեծի մասին կրպակները բաց էին, բայց շատերն ալ գոց: Բարիդի մէջ վաճառելի նիւթոց ամենեւին պակասութիւն մը չըկար, ուտելիքէ զատ ինչ որ կ'ուզես կը գտնես: Խմելիք ալ պակաս չէին, բայց խմող մը չտեսայ: Ուտելի նիւթոց կրպակաց մէջ բան մը չէր մնացեր: Կային անուշեղէններ, քաղցրաւենիներ, շաքարենիներ, բայց գոյացաւոր ուտելի բաները դիտակով պէտք էր փնտռել: Կրպակի մը մէջ մնայ մեծամեծ կտորներ տեսնելով խողենի կարծեցի. հարցուցի ինչ բան ըլլալին, և պատասխանեցին թէ ձիու գէր միս է: Հացարարաց կրպակները գոց էին, և մնալաճառանոցաց վանդակներն վար իջած: Ո՛հ. որչափ յուզարկաւորութիւնը, մէկ, երկու, երեք, վեց հատ միանգամայն տեսայ ճամբուս վրայ:

Յետին տխրութեան մէջ էր Բարիդ, բայց նոյն իսկ աղէտից մէջ իր վսեմութիւնը պահած էր իր խաղաղութեամբը և հանդարտութեամբը. իւրաքանչիւր դք իր ճամբան կ'երթար մաղձատ դէմքով խորին մտածութեանց մէջ ընկըղմած:

Ուտելիք գտնելը նեղութիւն կը պատճառէր ինծի: Պայուսակա գրեթէ օրագիրներով լեցուցեր էի, և միայն խողի ապխտածի քանի մը կտոր ունէի հետս: Այս առթիւս մէջ խողի ապխտածից ըրած տպաւորութե՛ն չափ, արդեօք տպաւորութիւն ըրած են երբեք աշխարհիս վրայ երեցած հանքաբանական և երկրաբանական անդիւտ առարկայք: Երբոր իմ սենեակս հասայ տանն աղախնայք հրաման ուղեցին դուրս տանելու այն նորագիւտ կերակուրն, իրենց ընկերակցացը ցուցընելու համար, և ըստ զրացիքն վազեցին այս զարմանալի կոշուկը տեսնելու փափաքանօք: